

«ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՆ Է»

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՕՆԻՆ (18 Յունիս 1995 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

«Եկէք շինենք լոյսի սուրբ խորանը, որովհետև սրանից ծագեց մեզ համար լոյսը Հայաստան աշխարհում»:

Այս օրը բացառիկ իմաստով օր է Հայաստանեայց Եկեղեցու համար մեր ողջ ժողովրդի կեանքում: Տօն է այսօր Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի Մայր տաճարի: Ամէն մի հայ եկեղեցի իր անուան տօնախմբութիւնը ունի, եւ ինձ համար այս օրը ողջ հայութեան, ամբողջ Հայաստանեայց Եկեղեցւոյ Մայր տաճարը եղող Սուրբ Էջմիածնի տօնն է: Նրա գաղափարի վերակենդանացումն է մեր մէջ, նրա խորհրդի ծաղկումը եւ մեր կեանքում նրա կատարելիք յեղափոխիչ դերի՝ խմորումի, պայծառակերպութեան օրն է այս օրը:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»:

Ես այս պահին այս խորանի վրա երեւակայութեամբ մտաբերում եմ, թէ քանի հարիւր հազար անգամներ այս բառերը հնչեցին հայ ժողովրդի զաւակների շրթներից, քանի՜-քանի՜ անգամներ այս բառերը արձագանքուեցին Հայաստանեայց Եկեղեցիների կամարների ներքեւ, քանի՜-քանի՜ անգամներ այս բառերն արտասանուեցին եւ կրկին հնչում են այսօր հայ կրթական յարկերի ներքեւ, մշակութային սրահների բեմերից, ընտանեկան յարկերի տակ. **«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:**

Այսօր, սակայն, եկէք մեր մտածումները, մեր ապրումները սեւեռենք այս բառերի վրայ, որովհետեւ խօսքեր, որոնք յաճախ ասում ենք, յաճախակիօրէն կրկնում ենք առհասարակ, կորցնում են իրենց իմաստի թարմութիւնը՝ կրկնողութեան հոգեբանական ազդեցութեան ներքեւ: Այսպէս յաճախ **«Հայր մեր»** ենք ասում գրեթէ մեքենաբար՝ առանց այդ բառերից իւրաքանչիւրի իմաստին անդրադառնալու:

Հարց տանք այսօր. ի՞նչ է նշանակում **լոյսի խորան:** Եթէ մեզ համար Սուրբ Էջմիածինը լոյսի խորան է, խորան բառի այն իմաստով, որ առհասարակ մարդիկ գործածում են, այսինքն մարմարէ կամ քարէ շինուած այն կառոյցը, որի վրայ դնում ենք աշտանակը, ճաճանչը, որի առաջ խունկ ենք ծխում, մոմ ենք վառում, այդ նիւթեղէ՞ն խորանն է, որ պիտի շինենք: Խորանը լոյսի՝ մարդը ի՛նքն է: Լոյսի բնակարանը մեր միտքն է, մեր սիրտն է, մեր հոգին է: Եւ լոյսի տարածման դաշտը մեր կեանքն է: Երբ սրբազան շարականագիրն ասում է, թէ լոյսի խորանը մենք պիտի շինենք, եւ այսօր այդ խօսքի մէջ երեւակայում եմ նրան, այդ հայ հոգեւորականին, ում այդ խորանի շինութեան որպէս ճարտարապետ պատկերացնում է Աստուած Ինքը:

Խորանը լոյսի՝ լոյսը ի՛նքն է, որ ստեղծում է Աստուած: «Ես Լոյս յաշխարհ եկի»,—ասում է մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս: Ճարտարապետը Սուրբ Էջմիածնի այս խորանի Աստուած Ինքն է՝ Իր Միածին Որդւոյն միջոցաւ: Եւ մենք՝ մարդիկս, եթէ հրաւիրում ենք այսօր շինելու սուրբ խորանը, ինձ համար նշանակում է, որ մենք հրաւիրում ենք այսօր կառուցուելու այդ խորանով եւ ոչ թէ կառուցելու խորանը: Երբ մենք դառնանք մասնակից Աստծուն, դառնանք գործակից Աստծուն, այն ատեն է, որ կարող ենք ասել «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»: Այլապէս մենք, իբրեւ մարդ էակներ, չենք կարող Աստծու լոյսի խորանը շինել: Լոյսը Ինքը կը շինի Իր խորանը մեր մէջ: Ես պատկերացնում եմ այն արուեստագէտին, բանաստեղծին, երաժշտին, քանդակագործին, որ երբ ստեղծագործում է, ապա նաեւ ստեղծագործւում է իր ստեղծածով: Երբ իր հոգին ճառագայթում է մարմարի մէջ, ձայների մէջ, բառերի մէջ, նա ինքն իրեն է արտայայտում, եւ իր արտայայտութեամբ է, որ լինում է այն, ինչ որ է: Մենք կարող ենք սուրբ խորանը շինել միայն այնպէս եւ այնքան, ինչքան որ մենք կարող ենք մասնակցել Աստծու շինարարութեան գործին, հոգեւոր շինութեան գործին: Հարց եմ տալիս այսօր ձեզ եւ ամբողջ աշխարհի մեր հայ ժողովրդին, որ Սուրբ Էջմիածինն է դաւանում իբրեւ Մայր Աթոռ. քա՞ր է Էջմիածինը, հո՞ղ է Էջմիածինը: Ոգի՛ է եւ ոգու ճառագայթումն է, որ նիւթի միջից է մեզ հասնում, այլապէս քարը քար կլինի առանց հոգու:

Եթէ երբեք մենք ուզենանք ճշմարտօրէն, ըստ էութեան ըմբռնել Սուրբ Էջմիածնի իմաստը, այդ իմաստի գաղտնի բանալին հենց նոյն ինքը բառի մէջ է՝ **ԷՋ-ՄԻԱԾԻՆ:** Եւ Էջմիածինը այնքան Էջմիածին է, որքան Միածնախօս է, որքան Քրիստոս այս կենտրոնից խօսում է մեր ժողովրդին: Էջմիածինը միայն լոյսի ընդունողը չէ, լոյսի ընկալողը չէ, այլ լոյսի ճառագայթումն է, լոյսի արձագանքողն է, լոյսի ցոլացուցիչն է: Երբ մեր ժողովուրդը Էջմիածին է ասում՝ զՔրիստոս է հասկանում, Աւետարանն է հասկանում եւ նրա ամենից արժանընտիր զաւակին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, որի Խոր Վիրապից դուրս գալու տօնն էր երեկ՝ շաբաթ օր:

Եւ ո՞վ էր Գրիգոր Լուսաւորիչ. դարձեալ եկէք բանանք մեր հոգիները այսօր՝ լսելու համար շարականի հոգեկից, Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ

գրուած բառերը. Գրիգոր Լուսաւորիչ **«քնար քաղցրախօս աստուածային Հոգւոյն, յօրինեալ մարմնով եւ մատամբք Հոգւոյն»:** Լուսաւորիչ քնար մըն է քաղցրախօս, նուագարան մըն է հաւատքի: Աստուածային Հոգին է, որ նրա կեանքի, նրա անձի, նրա գրածների, նրա գործերի միջից ճառագայթում է մեր կեանքում: Այդպէս Լուսաւորիչը ինչո՞վ է Լուսաւորիչ, նա, որ կազմուած է մարմնով և Հոգւոյն մատերով: Եւ եթէ երբեք նա իր հաւատքի լոյսը դրեց այս կենտրոնում, այդ լոյսը այսօր մեր մէջ պիտի կենդանանայ, եւ մենք նրանով պիտի լուսաւորուենք, որպէսզի մեր ժողովուրդը այս կենտրոնից լոյս ստանայ:

Հետևաբար **Էջմիածինը հաստատութիւն լինելուց առաջ' առաքելութի՛ւն է:** Այս բառերը ցանկանում եմ կրկնել. **Էջմիածինը անցեալի պատիւ, ներբող, գովք, պարծանք ու փառաբանանք լինելուց անդին' առաքելութի՛ւն է,** Աստծու թարգմանութիւնը, Աւետարանի քարոզութիւնը, մեր հայրերի սուրբ աւանդների կենդանի փոխանցումը մեր ժողովրդի զաւակներին: Ա՛յս է խորհուրդը Էջմիածնի: Եւ երբ մարդ հոգեղէն աչքերով կը դիտէ այս սրբավայրը, այն տեսնում է, որ Աւետարանի բառերով «քարերը կը խօսեն»: Բայց եթէ երբեք առանց հաւատքի, առանց հոգեկան լոյսի ներգործութեան, առանց հոգեկան հաղորդութեան նայի այս քարերին, այդ քարերը ի՞նչ տարբերութիւն ունեն ուրիշ քարերից: Այդ քարերը հաւատքի, գաղափարի, հոգիի, նուիրման սյուններ են, որոնցից մենք կենդանի ջուրն ենք խըմում Յիսուս Քրիստոսի Աւետարանի, մեր հայրերի միջոցաւ մեզ փոխանցուած:

Էջմիածի՞ն... Երբ այս բառը հնչում է հայ ժողովրդի շրթներին, ժողովուրդը ի՞նչ է պատկերացնում' քարե՞րը միայն: Պատկերացնում է այն սուրբ հայրերին, ովքեր այդ քարերի մէջ աղօթք են խառնել, հոգեկան ապրումներ են զետեղել, իրենց կեա՛նքն են այդ քարերի մէջ դրել: Էջմիածին, Գրիգոր Լուսաւորիչ և նրանից յետոյ, ակնարկելով միայն վերջին դարերին, աւելացնում եմ, Մովսէս Տաթևացի, Սիմէոն Երևանցի, Գէորգ Դ Մեծագործ, Խրիմեան Հայրիկ, Վազգէն Կաթողիկոս, Կոմիտաս վարդապետ եւ երանելի, եռամեծ այն վարդապետները, ովքեր Էջմիածնին Աստծու լեզուն են խօսեցնել տուել իրենց լեզուների միջից, իրենց կեանքերի միջից:

Եղբայրներ եւ քոյրեր, մենք պէտք ունենք մարդկօրէն պատասխանելու աստուածային ձայնին, մենք պէտք ունենք ներքին ամբողջական հոգեփոխութեան' արժանի լինելու համար այս սուրբ Տաճարին, այս սրբազնագոյն անունին ե՛ւ իբրև հոգևորականութիւն, ե՛ւ իբրև աշխարհական ազգայիններ Հայաստանում եւ կամ աշխարհի չորս կողմը ցրուած: Եթէ ունես ոսկի' փայլեցրո՛ւ այն, թիթեղի մի՛ վերածիր, փոշի թող չտեսնի, կեղտ թող չտեսնի: Աստուած ոսկին է տուել' մենք նրա փա՛յլը լինենք եւ ոչ թէ կեղտը կամ փոշին: Էջմիածինը ո՛յժ է, բայց հոգի՛ պէտք է ունենալ այդ ոյժը զգալու համար, պէտք է բացուել:

Այսօր իմ այս վկայութիւնը, չեմ ասում քարոզը, իմ այս հոգու խօսքը չեմ կարող փակել առանց բացելու ձեր աչքերի, ձեր հոգիների առաջ այն բառերը, որոնք գրուել են եւ պահպանուել մեր Ժամագրքում: Եւ մենք իբրև ժամամուտ այդ աղօթքը ասում ենք, բայց քանի՞ հոգի է այդ աղօթքն իմանում: Մնացել է գրքի մէջ: Այսօր գրքից դուրս եմ բերել եւ ձեր հոգիների մէջ արևի լոյսի պէս եմ ցանկանում տարածել նրա ոսկիացնող բառերը: Թող այդ բառերը լինեն ձե՛ր բառերը, ձեր հոգո՛ւ կենդանութիւնը ապահովող ներքին հոգեկան ոյժերը:

«Ձէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ աղօթքով Քո բազմաշնորհաց վիպոյի եւ մեր ճանապարհ ճօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի միջնորդութեամբ, մեծ փառքով եւ Քո յուսալէ՛ութեամբ երկնից իջար, ո՞վ Յիսուս, ի դաշտն Արարատեան ի յայցելութիւն փոքու ճօտիճ Քո ազգիս Հայոց։ Եւ քառկապէս ցոյց տուիր Քո սէրն ու ողորմութիւնը ճանդէպ մեզ Քո ապաստեղ իջնելովդ։ Եւ ոսկի ոտով բախեցիր աճդուճդճերի խորքը եւ ճպաճեցիր սաճդարամեանի բնակիչներս, որտեղ Դու բնաճեր յորիմումով ճրաշագործեցիր զԴպրն Աթոռն զՍուրբ Էջմիածին եւ ճրաշ վերուճեցիր Քո աստուածային շնորհճերի աճդաղտեղի շտեմարանն, ճրաշ վերուճեցիր ճճոդի, դասախօսարանի եւ մեր Հայաստանեայց բոլոր եկեղեցիճերի կատարեալագործոդի։ Արդ, ո՞վ Ճէր, պահեա զճա աճապրատ, մաքուր եւ աճաղուտ մեր բոլոր եկեղեցիճերի պայճառատիպութեան ճամար միճչեւ աշխարճի վերջը»։ Ի՞նչ խորունկ աղօթք, ի՞նչ ճերթատիպանցող ոյժ մեր ճոգիճերի մէջ՝ մաքր, ճճոդ, դասախօսարան, շտեմարան շնորճաց Սուրբ Էջմիածին։ Ինքի՛ր ապաստ մեր մէջ, ինչպէս Միածին Որդին իջաւ Արարատեան դաշտի մէջ։

Այսօր մեր ճոգեկան ճերաշխարճով վերածուենք Արարատեան դաշտի, Էջմիածինը ապրուի, տարբանայ, միանայ, ընդլուզուի մեր բոլորի ճոգեկան ապրումճերի մէջ։ Եւ այդ ապրումճերով փառք տանք Սրճեանակա Աստուծոյ ճօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։